

**ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՈՒՌՆՈՒՄ, ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ, ԱՐՁՆԻ ԵՎ ՊՏՂՆԻ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐ**

19.10.2013

Կոտայքի մարզպետ Կ. Շահգալդյանը, մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների և համապատասխան համայնքների ղեկավարների ուղեկցությամբ, այցելել է մարզի Նուռնուս, Բյուրեղավան, Արզնի և Պտղնի համայնքներ:

Նուռնուս համայնքի հիմնական դպրոցում Կոտայքի մարզպետը հանդիպել է ուսուցիչների հետ, պատասխանել նրանց կողմից տրվող հարցերին, այնուհետև համայնքնապետարանում տեղի է ունեցել տվյալ համայնքում մարզպետարանի կողմից իրականացված վարչական վերահսկողության ակտերի շուրջ քննարկում: Մարզպետն այցելել է նաև Բյուրեղավան համայնք, որտեղ ևս տեղի է ունեցել հանդիպում-քննարկում մարզպետարանի ենթակայությամբ գործող տեղի հիմնական դպրոցի ուսուցչական անձնակազմի հետ և համայնքում իրականացված վարչական վերահսկողության ակտերի քննարկում:

Արզնի համայնքում մարզպետը այցելել է տեղի դպրոց և մանկապարտեզ, ինչպես նաև զրուցել է մանկավարժների հետ և պատասխանել նրանց հուզող հարցերին:

Պտղնի համայնքում Կ.Շահգալդյանը հանդիպել է տեղի դպրոցի ուսուցչական անձնակազմին, այնուհետև գյուղապետարանում քննարկել է իրականացված վարչական վերահսկողության ակտերի մանրամասները: